Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Երևանի Լեոյի անվան N 65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Մակբայի ուսուցումը ակտիվ մեթոդների կիրառմամբ»

Կատարող՝ Գայանե Բեռնեցյան

«Գյումրու N19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ բ. գ. թ. դոցենտ Ա. Հայրապետյան

Գյումրի 2022

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1. Մակբայների ուսուցումն ակտիվ մեթոդներով----------4

Գլուխ 2. Մակբայների տեսակների ուսուցումն ակտիվ մեթոդներով-------11

Եզրակացություն----------18

Օգտագործված գրականության ցանկ----------19

Ներածություն

«Մակբայ» թեման ուսուցանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ծրագրում տրվում են մակբայի իմաստային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները: «Մակբայ» թեման ուսուցանելիս պիտի կարևորենք հետևյալը . նախ այն, որ սա նյութական իմաստ արտահայտող վերջին խոսքի մասն է, և որպես այդպիսին միակ խոսքի մասն է, որ ընդհանրապես չի թեքվում:

Շարահյուսության մեջ անպայման պետք է ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ մակբայները նախադասության մեջ դառնում են հիմնականում բայական անդամի և ածականով արտահայտված անդամի լրացում:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել «Մակբայ» խոսքի մասի առանձնահատկությունները, գտնել և ընտրել ուսուցման արդյունավետ մեթոդներ: Անհրաժեշտ է որպես ելակետ ընդունել ավանդական մեթոդները՝ դրանք զուգորդելով ժամանակակից ակտիվ մեթոդների ընտրանիով:

Հետազոտության նպատակներն են նաև ակտիվ մեթոդների կիրառմամբ .

. Ներկայացնել մակբայի ձևաբանական առանձնահատկությունների ուսուցման արդյունավետ միջոցները:

. Բացատրել մակբայների կազմությունը:

. Ընկալել տալ մակբայների շարահյուսական դերը:

. Զարգացնել քննադատական և ստեղծագործական մտածողությունը:

. Խոսքի մեջ ճանաչել մակբայի տեսակները:

. Տարբերել մակբայակերտ ածանցները, դրանցով և այլ խոսքի մասերով կազմել մակբայներ:

. Ճիշտ գրել մակբայները խոսքում:

.Արժևորել մակբայների կիրառությունը խոսքի մեջ:

Գլուխ 1. Մակբայների ուսուցումն ակտիվ մեթոդներով

Մակբայը որպես խոսքի մաս իմաստային տեսակետից բնորոշվում է նրանով, որ ցույց է տալիս գործողության հականիշ կամ էլ հատկանիշի հատկանիշ: Եթե գործողությունը, դրությունը, որակը, քանակը միավորենք առարկայի հատկանիշ ավելի լայն հասկացության տակ, ապա մակբայը ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ:

Որպես հատկանիշ ցույց տվող բառերի կարգ մակբայը շփման կետեր ունի ածականի հետ, միայն այն տարբերությամբ, որ եթե ածականը ցույց է տալիս առարկայի հատկանիշ, ինչպես՝ գեղեցիկ գրիչ, լավ մարդ, ապա մակբայը ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ՝ չափազանց գեղեցիկ գրիչ, շատ լավ մարդ: Եթե այս վերջին կետը ուրիշ լեզուների համար նշանակություն ունի, ապա հայերենի համար այդ էլ էական ու վճռական նշանակություն չունի, որովհետև որակական ածականները ոչ միայն կարող են գործածվել գայականների հետ՝ ցույց տալով առարկայի հատկանիշ, այլև կարող են գործածվել բայերի հետ՝ցույց տալով գործողության հատկանիշ:

Շատ լեզուներում մակբայը համարվում է չթեքվող խոսքի մաս: Միայն երկու լեզվում է թեքվում, որտեղ մակբայները կարող են հանդես գալ որպես համաձայնեցնող վերջավորություն:

Նախադասության մեջ մակբայները կատարում են պարագաների /տեղի, ժամանակի, չափ ու քանակի, ձևի/, որոշչի և ստորոգյալի գործառույթներ:

Կարծում ենք, որ մակբայի արդյունավետ ուսուցման տարբերակն անհատականացված ուսուցումն է:

Ուսուցիչը գրատախտակին գրում է նախադասություններ՝ ընդգրկելով մակբայներ:

Ուժգնորեն շառաչող կատաղի քամին սպառնում էր հոյակապ շինությանը: Կրակե լեզվակները պատն ի վեր էին սողում: Ամենուրեք հնչում էին տագնապի ահազանգերը: Արդեն ոչ ոք չէր կասկածում, որ վտանգը սարսափելի է: Ընդամենը երեսուն քայլ էր բաժանում կրակը փայտյա շինությունից:

Նկատեցինք, որ այդ նախադասությունների մեջ բայի վրա են դրված –պատն ի վեր, ուժգնորեն, ամենուրեք, արդեն, ընդամենը բառերը և ցույց են տալիս. առաջինը՝ գործողության կատարման ձևը, երկրորդ և երրորդը՝ գործողության կատարման տեղը, չորրորդը՝ ժամանակը, հինգերորդը՝չափը: Այսեղից կարելի է ենթադրել, որ մակբայները բաժանվում են չորս խմբի՝ տեղի, ժամանակի, ձևի և չափի:

Բացատրում եմ «մակբայ» եզրույթը՝ *մակ + բայ,* այսինքն՝ բայի վրա դրվող:

Անհատականացված ուսուցումն իրագործելու համար օգնության է գալիս «Խճանկար» մեթոդը: Դասարանը բաժանվում է չորս խմբի. Յուրաքանչյուր խմբին տրվում են արդեն պատրաստի առաջադրանքներ: Նախադասություններ, որտեղ ընդգծված բառերը մակբայներ կամ ածականներ են:

Նշել, ո՞ր խոսքի մասին է լրացնում ընդգծված բառը: Առանձնացնել գոյականներն իրենց լրացումներով:Առանձնացնել բայերն իրենց լրացումներով:Ընդգծված բառերով կազմել նոր բառակապակցություններ:

Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ իր խմբի աշխատանքը գրում է գրատախտակին և բացատրում, թե ինչո՞ւ իրենք այդ տարբերակը ընտրեցին: Սխալի դեպքում ուսուցիչը դիմում է մյուս խմբին և փորձում նրանց միջոցով ստուգել և հետևաբար, ստուգել նաև նրանց գիտելիքը: Եթե խմբերից մեկը ճիշտ պատասխան է տալիս, ուսուցիչը նրան գովասանական խոսքեր է ասում: Եթե ճիշտ պատասխան չի հնչում կամ պատասխանները լինում են կցկտուր ու անճիշտ, ուսուցիչը միջամտում է, ուղղում,նորից բացատրում՝ հիշեցնելով բայ և գոյական խոսքի մասերն ու դրանց լրացնող հնարավոր բառերը:

Ուսուցիչը նորից է բացատրում «մակբայ» եզրույթը: Ապա 1-ին և 2-րդ խմբերին հանձնարարում է գրել փոքրիկ պատմվածք մայրիկին կորցրած և անտառի մթին

թավուտներում մոլորված ուլիկի կամ ծովի ահեղամռունչ ալիքների տնօրինությանը մատնված մարդկանցով լի նավակի մասին՝ օգտագործելով նշված մակբայները:

3-րդ և 4-րդ խմբերին տրվում են հետևյալ առաջադրանքը: Կազմել ընկերական փոխհարաբերությունների մասին պատմող նախադասություններ՝ գործածելով՝ *առայժմ, դարձյալ,արագ, ընդառաջ, դանդաղ* մակբայները: Այս մեթոդը օգնում է աշակերտների մեջ զարգացնել ոչ միայն քերականական գիտելիքներ, այլև նրանց ստեղծագործական ունակությունները և գրավոր խոսքը:

«Մակբայ» թեման ուսուցանելիս կարելի է կիրառել «Ձնագնդի»[1] մեթոդական հնարը:

1. Ուսուցիչն աշակերտներին ներկայացնում է որևէ առաջադրանք.

Փակագծերում տրված տարբերակներից ընդգծել ճիշտ մակբայը.

Ա. Այդ մասին ասվել է /բազմիցս, բազմիցս անգամ/ ;

Բ. Նրան /հազվագյուտ, հազվադեպ / կարելի էր տեսնել պարապ զբոսնելիս:

Գ.Այդքան շատ բարձրաստիճան հյուրերի /միաժամանակ, միառժամանակ/ և անսպասելի գալը տանտերերին մի պահ շփոթության մատնեց:

Դ. Այդ մասին /բազմիցս, բազմիցս անգամ / զգուշացրել ենք նրան, բայց նա շարունակ կրկնում է նույն սխալը:

Ե.—Հանձնարարականը կատարե՛ք և ինձ մարդավայել պատասխան տվեք. թույլ մի՛ տվեք, որ / կրկին, կրկին անգամ/ դիմեմ ղեկավարությանը:

Զ. Մենք առիթ ունեցել ենք այդ մասին / մանրամասն, մանրամասը / խոսելու;

Է. Եվրոպական երկրներից մի քանիսը /խստիվ, խստիվ կերպով / դատապարտեցին Միացյալ Նահանգների ներխուժումը Իրաք:

[1] Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, Վանաձոր, 2008, էջ 80:

2.Անհատական աշխատանք. Ի՞նչ միտք է ծագում առաջին հերթին: Գրե՛ք ձեր գաղափարների /կարծիքների/ ցանկը այս առաջադրանքի վերաբերյալ;

3.Կազմե՛ք զույգեր և իրար ներկայացրեք ձեր անձնական կարծիքները: Ապա միասին ձևակերպե՛ք երկուսիդ համար ընդհանուր 3-5 կարծիք, որոնք վերցված են ձեր անհատական կարծիքների ցանկից: Գրե՛ք դրանք թղթի վրա:

4. Կազմեք 4 խմբեր: Ներկայացրեք զույգերով կազմած կարծիքները և նորից ձևակերպեք 4 ընդհանուր կարծիքներ ամբողջ խմբի համար: Խումբը գրում է դրանք առանձին թղթի վրա:

5.Երկուական 4 հոգանոց խմբերը միանում են և կազմում 8 հոգանոց մեծ խմբեր: Խմբերը ներկայացնում են իրենց կարծիքները, պարզում նմանությունները և տարբերությունները / ընթացքում նրանք կարող են ավելացնել նաև նոր կարծիքներ/: Նորից ձևակերպեք 4 ընդհանուր կարծիք ամբողջ խմբի համար:

6. Խմբերի ձևակերպած բոլոր կարծիքները ներկայացրե՛ք դասարանին:

7.Սովորողների հետ կատարե՛ք անդրադարձ՝ տալով հետևյալ բնույթի հարցեր.

- . Ի՞նչ զգացումներ ունեիք մենակ աշխատելիս:
- . Ո՞րն է երկուսով աշխատելու առավելությունը մենակ աշխատելու համեմատ:
- .Ո՞ր փուլում էին բոլորը հավասար և ակտիվ մասնակցում:
- .Արդյոք բոլո՞րը մասնակցեցին քննարկմանը՝ 8 հոգանոց խմբով աշխատելիս:

Սա բավական պարզ, բայց արդյունավետ մեթոդական հնար է, որը նպաստում է աշակերտների մտավոր հմտությունների զարգացմանը, նոր գաղափարներ ի հայտ գալուն:Առաջին փուլում աշակերտները անհատապես մտածում են առաջադրանքի շուրջ: Երկրորդ փուլում իրենց տեսակետը քննարկում են դասարանի աշակերտներից որևէ մեկի հետ: Երրորդ փուլում աշակերտները շարունակում են աշխատել չորս հոգանոց խմբում, որից հետո անցնում են համադասարանական քննարկման;

«Մակբայ» թեմայի ուսուցումը կարելի է ամրապնդել ինքնաստուգման առաջադրանքներով: Այսպես.

Հետևյալ սահմանումների մեջ գտնել միայն մակբային վերաբերողը:

1. Այն խոսքի մասը, որը ցույց է տալիս առարկաների, իրերի և երևույթների ու նրանց հետ կատարվող գործողությունների տեղը, ժամանակը, ձևը, չափն ու քանակը կոչվում է…

2. Այն խոսքի մասը, որը ցույց է տալիս կատարվող գործողության տեղը, ժամանակը, ձևը, չափն ու քանակը կոչվում է…

3. Այն բառերը, որոնք ցույց են տալիս տեղ, ժամանակ, ձև, չափ ու քանակ կոչվում են …

4. Միայն գործողության տեղ, ձև,չափ ու քանակ ցույց տվող խոսքի մասերը կոչվում են…

Ապա աշակերտներն ստանում են յուրաքանչյուր հարցին տրվող պատասխանները բացատրություններով և համեմատում իրենց պատասխանի հետ: Երեխաները ուսումնասիրում են այն և այստեղ օգնության է գալիս «Շրջագայություն պատկերասրահում»[2] մեթոդը, որը «Խճանկարի» մի տարատեսակ է:

Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ մոտենում է գրատախտակին, գրում կամ ընթերցում պատասխանը /1-ին խումբը 1-ին հարցի պատասխանը և այդպես հաջորդաբար մինչև 4-րդ հարցը/:

Առաջին հարց: Պատասխանը ճիշտ չէ: Վերոնշյալ 1-ին սահմանումը մակբային չի վերաբերվում:

Օրինակ՝ Սեղանին դրված գիրքը շատ էր գրավել Աշոտին:

Այս նախադասության մեջ սեղանին բառը տեղ է ցույց տալիս, բայց գոյական է՝ դրված տրական հոլովով:

[2] Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, Վանաձոր, 2008, էջ 28, 30:

Գիշերը ցուրտ կլինի:

Այս նախադասության մեջ գիշեր բառը ժամանակ է ցույց տալիս, բայց դարձյալ գոյական է՝ դրված հայցական հոլովով:

Երկրորդ խմբի աշակերտն է մոտենում և հայտնում, որ 2-րդ սահմանումն է ճիշտը:

Օրինակ՝ Ես այդ մասին գիտեմ վաղուց: Պատանին ձին կապել էր ծառին և ջանասիրաբար մաքրում էր ճանապարհը: Արագ մշուշ էր մեր լեռան վրա, վաղը նորից արև կծագի: Ամենուրեք մահ էր ու ավերածություն;

3-րդ սահմանումը սխալ է, քանի որ կան շատ բառեր, որոնք ժամանակ են ցուց տալիս, բայց մակբայ չեն:

Օրինակ՝ Վահագնը այս ժամին գրադարանում է լինում:Ժամը վեցին Վահանը թատերասրահում է լինում:

Այս նախադասությունների մեջ « այս ժամին »բառակապակցությունը ժամանակ է ցույց տալիս, բայց կազմված է դերանունից և գոյականից, իսկ վեցին բառը թվական է՝ դրված տրական հոլովով: Կան շատ բառեր, որոնք ձև են ցույց տալիս, բայց ոչ թե գործողության, այլ առարկայի, ուստի չեն կարող մակբայ լինել:

4-րդ սահմանումը լիարժեք չէ: Այս սահմանման մեջ բաց է թողնված գործողության ժամանակ ցույց տվող մակբայը: Մակբայները ցույց են տալիս ոչ միայն գործողության տեղը, ձևը, չափն ու քանակը, այլև ժամանակը:

Այս ձևով է բացատրվում «Մակբայ» խոսքի մասը:

«Մակբայ» թեմայի ուսուցանումն ու յուրացումը կարելի է ստուգել «Հաստ» և «բարակ» հարցերի աղյուսակ մեթոդով: Այս մեթոդը միտված է գիտելիքների ստուգմանը, ապա՝ համապատասխան կարողությունների ու հմտությունների ձևավորմանը: Թեման յուրացնելուց հետո սովորողներին առաջարկվում է լրացնել աղյուսակ՝ պատասխանելով «հաստ» ու «բարակ» հարցերին:

«հաստ հարցեր»	«բարակ» հարցեր
Բացատրեք՝ ինչո՞ւ	ե՞րբ
Ո՞րն է տարբերությունը	ինչպե՞ս
Ի՞նչ, եթե…	որտեղ
Ինչո՞ւ եք դուք մտածում, որ…	ինչչա՞փ
Ինչո՞ւ եք գտնում, որ…	Ճի՞շտ է արդյոք
Երեք բացատրություն բերեք, թե…	կարո՞ղ են
Ի՞նչ առանձնահատկություններ կասեք…	համաձա՞յն եք

Հարցերին սովորողները կարող են պատասխանել անհատական և խմբային աշխատանքով:

«Մակբայ» թեմայի ուսուցմանը շատ է օգնում քարտային գրանցումը, որը հնարավորություն է տալիս ամեն օր ստուգել և գնահատել բոլոր աշակերտների գիտելիքները՝ ծախսելով ընդամենը հինգ րոպե: Վերջում էլ ստուգել բոլորի գիտելիքները:

Օրինակ՝ մակբայի մանրամասն ուսուցման համար կարելի է ծախսել ընդամենը մեկ ակադեմիական ժամ: Այդ նպատակով պետք է կազմել 32 հարց, որոնցից յուրաքանչյուրն ունենա չորս պատասխան, որոնցից մեկն է միայն ճիշտը, և աշակերտը պետք է կարողանա ընտրել այդ միակը և համապատասխան նշում կատարել:

Քարտերը չորսական հարց են պարունակում և ունեն հետևյալ տեսքը:

1	1	2	3	4
2				
3				
4				

Հորիզոնական թվերը ցույց են տալիս հարցերի, իսկ ուղղահայացները՝ պատասխանների համարները: Մեկ հարցին տրված 4 պատասխաններից անհրաժեշտ է ընտրել մեկը և նշում անել համապատասխան վանդակում:

Բերենք նման առաջադրանքների օրինակ:

Ժամանակի մակբայներ:

1.Այս չորս սահմանումների մեջ միայն մեկն է, որը ճիշտ և ամբողջապես է բնութագրում ժամանակի մակբայը: Գտեք այդ սահմանումը:

Ա. Չհոլովվող այն բառերը, որոնք ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը, կոչվում են ժամանակի մակբայներ: Ժամանակի մակբայը պատասխանում է ե՞րբ հարցին:

Բ. Այն խոսքի մասերը, որոնք գործողության կատարման ժամկետն են ցույց տալիս, կոչվում են ժամանակի մակբայներ: Դրանք պատասխանում են ե՞րբ հարցին:

Գ. Ե՞րբ հարցին պատասխանող այն բառերը, որոնք ժամանակ, տեղ, ձև, չափ ու քանակ են ցույց տալիս, չեն հոլովվում և հոդ են ընդունում, կոչվում են ժամանակի մակբայներ:

Դ.Ե՞րբ հարցին պատասխանող այն բոլոր բառերը, որոնք ցույց են տալիս

գործողության ժամանակը, առանց հոլովվելու և հոդ ստանալու, կոչվում են ժամանակի մակբայներ:

2.Առաջին հարցի տակ դրված մակբայների չորս սահմանումներից մեկի մեջ բացակայում է մակբայի մեկ ձևական հատկանիշի նշումը: Գտնել այդ սահմանումը:

3. Առաջին հարցի տակ դրված մակբայների չորս սահմանուներից մեկի մեջ չի նշվում մակբայի երկու ձևական հատկանիշը, որով նրանք տարբերվում են նշանակությամբ մակբային նմանվող մյուս խոսքի մասերից: Գտնել այդ սահմանումը:

4.Առաջին հարցի տակ բերված մակբայների 4 սահմանումներից մեկի մեջ խախտված է սահմանման ձևը, որի պատճառով էլ նա միայն ժամանակի մակբայ չէ, որ կարող է վերաբերել: Գրել այդ սահմանումը:

Կարելի է պատրաստել ավելի շատ հարցեր պարունակող քարտեր՝գիտելիքների ավելի մեծ բնագավառ ստուգելու համար: Փորձը ցույց տվեց, որ աշակերտները հետաքրքրությամբ են սովորում նմանօրինակ ուսուցմամբ, ինչպես իրենք են ասում, երբեք չեն մոռանում սովորածը: Տրվող առաջադրանքները, որ տարբեր են նյութի բոլոր բաղադրամասերի համար, աշակերտների մեջ ձևավորում են դասի պատասխանները տարբեր ձևերով կառուցելու ցանկություն և սովորություն: Արդյունքն այն է, որ ընկերների պատասխանները լսող աշակերտները երբեք շեն ձանձրանում; Սովորածի վերարտադրության վերը նշված ձևը ինչ- որ չափով օգնում է ուսուցչին՝դասի այս մասն առավել արդյունավետ դարձնելու գործում: Աշակերտի պատասխանները գնահատելիս պետք է հաշվի առնել աշակերտի կողմից դասանյութի վերարտադրության ինքնատիպությունը և ունկնդիրների համար պատասխանի հետաքրքրական լինելը; Ծրագրավորված ուսուցման մյուս արժանիքն ուսուցման և զարգացման միտումն է: Հայտնի է, որ ուսուցումը աշակերտին գիտելիքներ, հմտություններ և կարողություններ տալու հետ միաժամանակ պետք է ապահովի և նրանց մտավոր զարգացումը: Որպեսզի ընթերցողը լավ պատկերացնի ծրագրավորված ուսուցման ընթացքը, բերենք «Մակբայների տեսակների » ուսուցման ծրագրավորումը:

Գլուխ 2. «Մակբայների տեսակների ուսուցումը ակտիվ մեթոդներով»

Առարկաները, իրերն ու երևույթները խմբավորելիս մարդիկ, որպես հիմք վերցնում են որևէ հատկանիշ: Առաջադրանքներ՝

1.Հիշիր, թե նախադասությունների ինչպիսի՞ խմբավորումներ կան, որոնց ծանոթացել ես նախորդ դասարաններում, և ամեն մի խմբավորումը կատարելիս ո՞ր հատկանիշն են քերականները բաժանման հիմք դարձրել:

2.Նախադասության անդամները վաղուց են ուսումնասիրված լեզվաբանների կողմից, և վերջիններիս դրանք ևս խմբավորել են: Այդ խմբավորումը բաժանման հիմք է դարձել;

Հասկանալի է, որ մակբայները ևս պետք է խմբավորել, որովհետև դրանք շատ են և տարբեր: Եվ ահա լեզվաբանները բոլոր մակբայները բաժանել են 4 խմբի՝ տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի: Այդ խմբավորումը կատարելիս նրանք հիմք են ընդունել մակբային հատուկ որոշակի հատկանիշ[3]:

Տեղի	Ժամանակի	Ձևի	Չափ ու քանակի
ամենուրեք այլուր, բերնեբերան, դեմ առ դեմ, ամենուր, դեմ դիմաց, դեմուդեմ, դեսուդեն, դեմ հանդիման,	Այժմ, արդեն, այլև, այսուհետ, այսօր, գիշեր-ցերեկ, դեռ, երբեք, ընդմիշտ, ժամ առ ժամ, հավետ, հետո, մանկուց, միշտ, նախ, նախօրոք,	Արագ, արագորեն, արտաքուստ, բարեկամաբար, բարոյապես, գիտակցաբար, դանդաղորեն, զույգ- զույգ,	Ամենևին, ամբողջովին, ավելի, բազմիցս, գրեթե, դարձյալ, երիցս, կրկնակի, ընդամենը, հազիվ, հաճախ, մասամբ, մեկ- մեկ, նորից,

[3] Հայոց լեզվի ուսուցման գծակարգեր և աղյուսակներ, Երևան, 2007, էջ 80:

դռնեդուռ, գյուղեգյուղ, երկրեերկիր, հետ, ընդառաջ, հեռու, մեջտեղ, պատն ի վեր, սարն ի վեր տեղ- տեղ և այլն	շուտով, վաղը, վաղուց, վերջերս, տարեցտարի, բոպե առ բոպե, ուշ, ցարդ, օրըստօրե, օր օրի և այլն	իսկույն, լրջորեն, խստիվ, կամաց, հազիվհազ, հանկարծ, հապճեպ, մեջընդմեջ, շտապ, միասին և այլն	շատ, չափազանց, փոքրիշատե, քիչ-քիչ, առավելապես, կիսով չափ, մեկիկ –մեկիկ, մոտավորապես և այլն

Մակբայների տեսակներն ակնառու երևում են վերոգրյալ «Չորս մաս ունեցող օրագիր» մեթոդը կիրառելիս:

Մակբայների տեսակներն ուսուցանելիս նաև ամրապնդող հնար է «Ինքնաստուգման առաջադրանքը» հետևյալ պահանջով. Որոշել,թե ներքևում բերված 4 դատողություններից ո՞րն է ճիշտ:

1.Մակբայները խմբավորելիս լեզվաբանները հիմք են ընդունել մակբայների կազմությունը:

2.Մակբայների խմբավորումը կատարելիս լեզվաբանները որպես բաժանման հիմք ընդունել են մակբայների նշանակությունը:

3.Մակբայները 4 խմբի բաժանելիս հիմք է ծառայել նրանց ուղղագրությունը:

4. Բոլոր մակբայները՝ տեղ, ժամանակ, ձև, չափ ու քանակ ցույց տվող, չորս խմբի բաժանելու հիմք է դարձել նրանց չհոլովվելու և հոդ չստանալու հատկությունը:

Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ մոտենում է գրատախտակին և ներկայացնում մեկ հարցի պատասխանը՝պատճառաբանելով, թե ինչո՞ւ է այն ճիշտ կամ սխալ; Եթե լիարժեք չէ, կամ սխալ է պատասխանը, նրան կարող են օգնել մյուս խմբի ներկայացուցիչները: Վերջում միջամտում է ուսուցիչը՝ ներկայացնելով լիարժեք ճիշտ պատասխանը, եթե մինչ այդ աշակերտներն այն չեն հնչեցրել:

1.Եթե կազմությունը լիներ բաժանման հիմքը, ապա պետք է, որ լինեին պարզ, բարդ և բաղադրյալ մակբայներ: Սակայն այստեղ խմբերը բոլորովին ուրիշ անուն են

կրում՝ տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի: Այսպես ներկայացվում են բոլոր հարցերի պատասխանները:

Կարևոր է նաև առաջադրանքների համակարգը: Եթե տրված է կազմել նախադասություններ՝օգտագործելով մակբայներ, ապա պետք է անպայման որևէ ուղղվածություն տալ առաջադրանքին, որը կզարգացնի նրանց գեղարվեստական խոսքը:

Օրինակ՝ աշակերտներին առաջարկվում է կազմել նախադասություններ և փոքրիկ կապակցված խոսք բնության գեղեցկությունների մասին՝ օգտագործելով « դեմ հանդիման, ամենուր, բերնեբերան, դեմ ու դեն, տեղ-տեղ» մակբայները:

Կամ կազմել մի փոքր խոսք ՝բնությունը պաշտպանելու անհրաժեշտության մասին՝օգտագործելով մակբայներ:

Այս հանձնարարություններն ունեն նաև բարոյական և գեղագիտական արժեք;

Նրանք հետաքրքրություն են առաջացնում, և տնային աշխատանքների ստուգման

ժամանակ սովորողները աշխուժությամբ են ունկնդրում յուրաքանչյուրի կազմածը:

Առաջադրանքների այսպիսի համակարգը հնարավորություն է տալիս քերականության դասերը ծառայեցնելու իրենց բուն նպատակին՝ խոսքի զարգացմանը:

Հաշվի առնելով, որ մակբայի հանգամանալից քննությունը կարևոր նշանակություն ունի աշակերտների բառապաշարի հարստացման, կապակցված խոսք կառուցելու հմտության, ինչպես նաև ուղղախոսական և ուղղագրական կարողությունների զարգացման համար, նպատակահարմար է և շահավետ անդրադառնալ որոշ տեսական գիտելիքների՝ դրանց կազմության և իմաստային յուրահատկությունների վերաբերյալ;

Ութերորդ դասարանում մակբայն ուսուցանելիս ուսուցիչն ամենից առաջ հասկացություն է տալիս այդ խոսքի մասի ընդհանուր իմաստի մասին, այլ կերպ՝ նշում է, որ մակբայը թեև ունի նյութական բովանդակություն, սակայն մտնում է չթեքվող խոսքի մասերի համակարգի մեջ և խոսքիմաստային առանձնահատկությունն այն է, որ ցույց է տալիս գործողության հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ: Ակամա կարող է հարց ծագել՝ չէ՞ որ հատկանիշ ցույց են տալիս նաև ածականները, դերանունները, թվականները, գոյականի որոշ հոլովաձևերը; Մինչդեռ, խորանալով մակբայի էության մեջ, նկատում ենք, որ այն էապես տարբերվում է մյուս խոսքի մասերից: Ահա այս տարբերությունը ուսուցիչը հանգամանորեն բացատրում է գրատախտակին գրված զուգադիր օրինակների հիման վրա[4]: *

մեծ	մեծանալ	տարեցտարի
հմուտ	հմտանալ	չափազանց
աշխույժ	աշխուժանալ	առերևույթ
կարմիր	կարմրել	դեմառդեմ
գեղեցիկ	գեղեցկանալ	հիմա
բարձր	բարձրանալ	այսօր

Այնուհետև համեմատության և հակադրության հնարքի կիրառման միջոցով ուսուցիչը բացատրում է, որ առարկայի հատկանիշ արտահայտելու բնույթով զուգադիր բառերից երրորդները՝ մակբայները, տարբերվում են և՛ ածականներից, և՛ բայերից:

Մակբայի կիջառարկայական կապերը բացահայտելու համար ուսուցիչը պահանջում է հարց տալ զուգադիր շարքի յուրաքանչյուր բառին /ո՞ր, ինչպիսի՞- մեծ,

[4] Հայոց լեզու և գրականություն, Երևան, 2003 թիվ 3-4, էջ 86

հմուտ, ի՞նչ անել- մեծանալ, հմտանալ, ինչպե՞ս- արագ, ե՞րբ- հիմա, որտե՞ղ- դեմառդեմ, որքա՞ն- չափազանց/[5]:

Ի մի բերելով այդ հարցերը՝ուսուցիչն անպայման պիտի ընդգծի չորս կարևոր հանգամանք.

Ա. Մակբայ նշանակում է «բայի վրա դրվող»:

Բ. Մակբայները ցույց ենտալիս գործողության հատկանիշ կամ էլ հատկանիշի հատկանիշ:

Գ. Մակբայները զուրկ են թեքման ձևերից, չեն հոլովվում:

Դ. Կազմվում են նաև ածականների, թվականների, նաև մակբայների կրկնությամբ /հպարտ- հպարտ, չորս- չորս, բառ առ բառ, շուտ- շուտ/:

Որոշակի օրինակների միջոցով ուսուցիչը ցույց է տալիս մակբային առնչակից խոսքի մասերի աղերսներն ու տարբերությունները: Այսպիսով, նոր նյութի ուսուցման ընթացքում ուսուցիչը կրկնում է և ամրակայում անցած նյութերը, պահպանում ներառարկայական կապերը:

[5] Հայոց լեզու և գրականություն, Երևան, 2003, թիվ 3-4:

Եզրակացություն

Ուսումնասիրելով մեր հետազոտության թեման՝ եկանք հետևյալ եզրակացության.

- Ցանկալի արդյունք ապահովելու համար յուրաքանչյուր դասին ուսուցիչը նախապատրաստվի՝ ընտրելով գործադրվող մեթոդները, հնարները, վարժությունները:
- Դասը պլանավորելիս պետք է որպես ելակետ ընդունել նաև ավանդական մեթոդները՝ դրանք զուգորդելով ժամանակակից ակտիվ մեթոդներով և հնարներով:
- Արդյունավետ և հիմնավոր ուսուցման համար ցանկալի է կիրառել և՛ ավանդական, և՛ ժամանակակից մեթոդները:
- Հիմնական դպրոցի բարձր դասարաններում կարելի է ավելի շատ կիրառել ժամանակակից մեթոդները՝ քննարկումներով և վերլուծություններով:
- Տեսազննական մեթոդներ գործադրելիս նախընտրելի է կիրառել ժամանակակից մեթոդները:
- Առաջարկում ենք նաև կիրառել համացանցում տեղադրված ժամանակակից մեթոդները՝ մանավանդ ԿՏԱԿ-ի և ԿԳՄՍՆ-ի կողմից երաշխավորվածները:

Գրականության ցանկ

1.Հովհ. Բարսեղյան, Փ.Մեյթիխանյան, Հայոց լեզու-8, Երևան, 2022, «Աստղիկ» գրատուն. Հրատարակչություն, էջեր :

2.Ս.Սրուխանյան, Ա. Դալլաքյան, Ն.Դիշաղաջյան, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, 2008 «Վանատուր» ՍՊԸ տպարան, էջեր :

3.Մ.Ասատրյան, «Ժամանակակից հայոց լեզու», Երևանի պետական համալսարանի հրատարակչություն 2002, էջեր

4. Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, Ձևաբանություն, Երևան 2008, «Տաթև» գիտական համալիր, Դպրոցական մատենաշար, էջեր

5.Ա. Ե. Տեր- Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, «Լույս» հրատարակչություն, էջեր

6. Փ.Մեյթիխանյան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2011, «Աստղիկ» գրատուն, էջեր

7. ՀՀ ԿԳՆ ԿԱԻ «Հայոց լեզու և գրականություն» գիտամեթոդական հանդես, Երևան, 2017, թիվ 1, էջեր 39-45:

8. ՀՀ ԿԳՆ կրթության բարեփոխումների կենտրոն, «Հայոց լեզու և գրականություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան 2003 թիվ 2-3, էջեր 85-91:

9. Ն. Վիրաբյան, Լ.Սարգսյան, Հայոց լեզվի ուսուցման գծակարգեր և աղյուսակներ, Երևան 2007, «Զանգակ» հրատարակչություն, էջեր